

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության

Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները Գլաձոր խոշորացված համայնքի պայմաններում» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ ներկայացված Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրապետության վարչատարածքային միավորների խոշորացման գործընթացը իրականացվում է այն հիմնավորումից, որ համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված վարչատարածքային միավորները իրենց տրամադրության տակ ունենալով համեմատաբար զգալի նյութական և ֆինանսական միջոցներ կարողանալու են իրականացնել լայնածավալ և համապարփակ այնպիսի ծրագրեր, որոնք նպատակամղված են խոշորացված համայնքների բնական ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործմանը: Համայնքների բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը առաջին հերթին կախված է հողաշինարարական ռեսուրսների կազմակերպման աստիճանից, դրանց քանակական և որակական գնահատականից, օգտագործման և կառավարման առանձնահատկություններից և համայնքի սոցիալ-տնտեսական, բնապահպանական իրավիճակից: Տարբեր փորձագետների, հետազոտողների և գիտական կազմակերպությունների ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ հողերի սեփականաշնորհման պայմաններում գյուղատնտեսական հողօգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդրի լուծումը կախված է մի շարք գործոններից, որոնց թվին են պատկանում, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, տնտեսվարման ոչ արդյունավետ մեթոդները, հողամասերի կտրտվածությունը, տարածական հեռացրվածությունը, նյութական և ֆինանսական ռեսուրսների բացակայությունը: Խնդրի լուծումը դառնում է շատ ավելի դժվար հաղթահարելի, երբ գյուղատնտեսական հողօգտագործման բնագավառում հանդես է բերվում կամայական մոտեցումներ հողահատկացման, հողամասերի հողաշինարարական կազմակերպման, հողօգտագործման կարգավորման ժամանակ: Բազմաթիվ

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական նորույթի բովանդակությունը հիմնավորված է տեսական և գործնական հետազոտությունների արդյունքներով: Համայնքների խոշորացման հիմնական նպատակներից ելնելով՝ կատարվել է Վայոց ձորի մարզի Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացման, տարածքների հողաշինարարական կազմակերպման ցուցանիշների գնահատում: Հիմք ընդունելով բնակչության կողմից հիմնական պարենամթերքների նկատմամբ գործող նորմատիվային պահանջը՝ հիմնավորվել է գյուղատնտեսական ցանքատարածքների կառուցվածքը: Ելնելով միջհամայնքային համագործակցության հնարավորություններից՝ մշակվել է բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, արոտաշրջանառության կազմակերպման անհրաժեշտությունը՝ ելնելով խոշոր եղջերավոր կենդանիների արոտային տարածքի և արոտային կերի նկատմամբ նորմատիվային պահանջից, ինչպես նաև արոտակերի սննդարարության և արոտի բերքատվության ցուցանիշներից: Համեմատման և համադրման ճանապարհով բացահայտվել են հողակադաստրային քարտեզագրական հիմքերի անճշտությունները և առաջարկվել են հողակադաստրային ուսումնասիրությունների իրականացման ճշտագրված նոր հողագիտական քարտեզագրական մասշտաբային նորմատիվներ: Տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման մեթոդով հիմնավորվել է Գլաձոր համայնքի (Գլաձոր, Գետափ, Վերնաշեն) գյուղատնտեսական ցանքատարածքների օպտիմալ կառուցվածքը և մակերեսը: ArcGIS միջավայրում ստացվել են Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի գյուղատնտեսական հողատեսքերի թվային քարտեզները և ստեղծվել է համայնքի հողային ֆոնդի հաշվառման, գնահատման ու վերլուծության տարածական տվյալների բազան: Բազմամյա ագրոկլիմայական ցուցանիշների վերլուծության հիման վրա Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի պայմաններում գնահատվել և բացահայտվել են համայնքի ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղիները:

Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, այնուհանդերձ այն զերծ չէ թերություններից և բացթողումներից, որոնք ներկայացված են ստորև դիտողություններում:

1. Ատենախոսության առաջին գլխում հեղինակը, անդրադառնալով հողերի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրն, նշում է հատկապես գուղացիական փոքր տնտեսությունների առկայությունը, հողամասերի փոքր չափերը և այլ գործոններ: Սակայն, ի վերջո, հեղինակը չի կոնկրետացնում, թե ինչպիսի ուղիներով, կամ միջոցառումներով է հնարավոր այդ տնտեսությունները խոշորացնել: Աշխատանքում ներկայացվում է նաև կոոպերացիայի միջազգային փորձի արդյունքները, սակայն ցանկալի կլիներ, որ այդ ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվեին, թե որ մոտեցումներն են առավել նպատահարմար մեր պայմանների համար:
2. Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը անդրադարձել է հողային պաշարների արդյունավետ օգտագործման խնդիրներին, մասանավորապես այն կապելով հողօգտագործման բնահողային գոտիներում տեղաբաշխված հողատիպերի քանակական և որակական առանձնահատկությունների հետ: Սակայն աշխատանքում հիմնավորված չէ, թե որքանով է հիմնավորված ընտրված օբյեկտը տիպային Վայոց Ձորի մարզի պայմանների համար:
3. Էջ 43-ում ներկայացված են տարբեր մոդելներ հողաշինարարական խնդիրների լուծման համար և առաջարկվում հողօգտագործան բալ հասկացողությունը, սակայն ներկայացված չեն համապատասխան բացատրություններ և մեկնաբանություններ այս հասկացության վերաբերյալ:
4. Էջ 55-56-ում ներկայացված են վարելահողերի և խաղողի այգիների խոշորացման հողաշինարարական սխեմաներ, սակայն շարադրանքից պարզ չի հասկացվում արդյոք այս սխեմաները հնարավոր է իրականացնել բնության մեջ:
5. 3.4. ենթագլխում հեղինակն անդրադարձել է հողերի կադաստրային գնահատման առանձնահատկություններին, սակայն ցանկալի կլիներ տրվեր որոշակի պարզաբանումներ, թե որոնք են այդ առանձնահատկությունները և ինչպես են հաշվի առնվել հողերի կադաստրային գնահատման ժամանակ:
6. Չորրորդ գլխում հեղինակը ներկայացրել է Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի հողակադաստրային քարտեզագրման թվայնացման արդյունքները, ըստ հողատեսքերի, սեփականության սուբյեկտների և նպատակային նշանակության:

Սակայն ցանկալի կլիներ հեղինակը ներկայացնել թվայնացումից առաջ և հետո ստացված արդյունքների համեմատական գնահատականը և դրանց ազդեցությունը հողային և ջրային պաշարների արդունավետ օգտագործման վրա:

Ատենախոսության համապատասխանությունը կանոնակարգի պահանջներին

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, 112 անուն գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 141 էջի վրա, որը ներառում է թվով 21 աղյուսակ և 43 նկար: Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները, գիտական նրույթը և եզրակացությունները: Ատենախոսության հիմնական դրույթների հիման վրա հրատարակված են 8 գիտական հոդվածներ, որից 3 առանց համահեղինակների: Բոլոր հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունված գիտական տեղեկագրերում: Եզրակացությունները բխում են ատենախոսական աշխատանքի գիտական նորույթից, տեսական և դաշտային հետազոտությունների արդյունքներից:

Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքները կարելի է կիրառել համայնքների խոշորացման արդյունքում ձևավորված նոր վարչական տարածքի հողային և ջրային պաշարների արդյունավետ կառավարմանն ուղղված ծրագրերում:

Եզրակացություն

Ամփոփելով Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները՝ Գլաձոր խոշորացված համանքի պայմաններում» թեմայով ատենախոսական աշխատանքի ամբողջ բովանդակությունը հանգում ենք հետևյալ եզրակացության: Գտնում ենք, որ ներկայացված ատենախոսական աշխատանքը կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, այն իրեն հետազոտության արդյունքներով, գիտական նորույթով, եզրակացություններով և արտադրության արված առաջարկություններով նպատակամղված է լուծելու հողային և ջրային պաշարների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները Վայոց ձորի

բնակլիմայական և տնտեսական պայմանների օրինակով: Գտնում ենք, որ Ավետիք Արմենի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ-ում ԲՈԿ –ի կողմից աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Ավետիք Արմենի Ալեքսանյանը, արժանի է 2.01.01. - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ճարտարապետության և շինարարության

Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ)

Ինժեներական գեոդեզիայի ամբիոնի

աշխատանքները համակարգող, գ.գ.թ. դոցենտ՝




Ս.Զ. Կրոյան

ՃՇՀԱՀ Հիդրոշինարարության, ջրային համակարգերի

և հիդրոէլեկտրակայանների ամբիոնի վարիչ,

տ.գ.դ., պրոֆեսոր՝



Է.Ա. Խաչատրյան

Գ.գ.թ., դոցենտ Ս. Զ. Կրոյանի և տ.գ.դ. պրոֆեսոր Է. Ա. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՃՇՀԱՀ գիտական քարտուղար տ.գ. թ. դոցենտ



Է. Ա. Լևոնյան

25. 08. 2020թ.